# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
## «24» մարտի 2021թ. N ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/06-2 պայմանագրի

ք.Երևան «12» «08» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի Գ.Գույյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ն, ի դեմս Դ.Հովհաննիսյանի, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք Կառավարության 2021 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1133-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2021 թվականի մարտի 24-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/06-2» ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2021 թվականի մարտի 24-ին կնքված «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/06-2» ծածկագրով պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **Շրջակա միջավայրի նախարարություն** | **Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Կոմիտասի պող. 56-46 |
| ՖՆ գործառնական վարչություն | «ԱյԴի Բանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011038214 | ՀՀ 11813012607100 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 20179887 |
| Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար | Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի տնօրեն |
| **Գ.Գույյան** | **Դ.Հովհաննիսյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
«12» «08» 2021թ. կնքված
համաձայնագիր №1
№ ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/06-2 պայմանագրի

**ԳՆՈՐԴ**
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
**Գ.Գույան**
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի
տնօրեն
**Դ.Հովհաննիսյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով) | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 42671170 | շղթայավոր սղոց | - | - | - | - | - | - | - | 480.0 | 480.0 | 480.0 | 480.0 | 480.0 | 480.0 |
| **Ընդամենը** | | | - | - | - | - | - | - | - | **480.0** | **480.0** | **480.0** | **480.0** | **480.0** | **480.0** |